Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 09-06-2023 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԶԱՔԻՅԱՆ Փ. ԹԻՎ 7-3
1.3 Պետական գրանցման համարը		222.160.68143
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-02-09
1.5 ՀՎՀՀ-ն		02605266
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10606609
		+(374)98655601
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		advschool.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@advschool.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	23	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	բանկային տոկոսներ	2,386,780
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

	ունկընդիրների ուսուցում , որակավորման քննությունների կազմակերպում , փաստաբանների վերապատրաստում	143,753,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	135,475,682	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

2022թվականի մուտքերը կազմում են 143753000 ՀՀ դրամ , որոնք գոյացել են հավակնորդների քննության վճարներից և ունկընդիրների ուսման վարձերից (այս թիվը չի արտահայտում հարկային իմաստով եկամտի չափը , որը համարվում է ունկնդրի վճարած այն գումարը , որի դիմաց վերջինս ստացել է ծառայությունը): Տարվա փաստացի ծախսերը կազմում են 135475682 ՀՀ դրամ(ներառում է նաև նախորդ տարվա որոշծախսերի դիմաց վճարումները), որոնք գոյացել են ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից իրականացվող գործունեությունից ,որը չի հանդիսանում ծրագիր

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 7 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel: (+374 10) 399 855, (+374 55) 560 550

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի մարտի 10-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ

ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի՝ էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն

հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն Լ.Պողոսյան

«ՋԻ ԸՆԴ ՔՈ ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ» «G & CO AUDIT GROUP» 00128775 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ YEREVAN LIMITED LIABILITY COMPANY REPUBLIC OF ARMENIA

Աուդիտոր Հ.Մարտիրոսյան

«30» մայիսի 2023թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ
առ 31-ը դեկտեմբերի 2022թ. դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	ԾՆԹ.	31/12/2022 հազ. դրամ	31/12/2021 հազ. դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	*12,230*	*7,874*
Ոչ նյութական ակտիվներ	8	*29,155*	*37,407*
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*41,385*	*45,281*
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	*1,731*	*2,568*
Շահութահարկի գծով գերավճար		-	*654*
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ	10	*1,356*	*2,152*
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	11	*490*	*30,000*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	*65,255*	*28,886*
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*68,832*	*64,260*
Ընդամենը ակտիվներ		110,217	109,541
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ ակտիվներ	13		
Զուտ ակտիվների հավելաճ (նվազում)		*2,832*	*13,586*
Ընդամենը Զուտ ակտիվներ		2,832	13,586
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	14	*28,033*	*37,125*
Հետաձգված հարկային պարտավորություն	15	*6,516*	*7,094*
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*34,549*	*44,219*
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	*64,322*	*44,290*
Շահութահարկի գծով պարտավորություն		*34*	-
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություն	10	*4,200*	*3,726*
Պահուստներ	17	*4,280*	*3,720*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*72,836*	*51,736*
Ընդամենը Զուտ ակտիվներ և պարտավորություններ		110,217	109,541

10-ից 32-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռեկտոր
Արա Զոհրաբյան

Գլխավոր հաշվապահ
Միդա Աբրահամյան

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ

2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	ԾՆԹ.	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Հասույթ	18	*122,827*	*119,811*
Ինքնարժեք	19	*(22,538)*	*(21,013)*
Համախառն շահույթ (վնաս)		100,289	98,798
Այլ եկամուտներ	20	*10,030*	*13,517*
Իրացման ծախսեր	21	*(13,998)*	*(10,218)*
Վարչական ծախսեր	22	*(106,304)*	*(84,651)*
Այլ ծախսեր	23	*(2,831)*	*(44)*
Գործառնական շահույթ (վնաս)		(12,814)	17,402
Ֆինանսական եկամուտներ	24	*1,566*	*1,070*
Ֆինանսական ծախսեր		-	-
Այլ ֆինանսական հոդվածներ	25	(85)	(70)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		(11,332)	18,402
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	26	578	(3,436)
Տարվա շահույթ (վնաս) հարկումից հետո		(10,754)	14,966
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Զուտ ակտիվներում ճանաչված օգուտներ (վնասներ)		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(10,754)	14,966

10-ից 32-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռեկտոր
Արա Զոհրաբյան

Գլխավոր հաշվապահ
Միդա Աբրահամյան

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ
2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

		հազ. դրամ
	Կուտակված հավելաճ (Չծածկված վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2020թ.	**(1,380)**	**(1,380)**
Տարվա հավելաճ	14,966	14,966
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2021թ.	**13,586**	**13,586**
Տարվա հավելաճ	(10,754)	(10,754)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ.	**2,832**	**2,832**

10-ից 32-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռեկտոր
Արա Զոհրաբյան

Գլխավոր հաշվապահ
Միդա Աբրահամյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ

2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2022-31.12.2022	01.01.2021-31.12.2021
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Ծառայությունների մատուցումից ստացված դրամական միջոցներ	143,753	142,061
Վճարումներ մատակարարներին	(29,142)	(14,397)
Վճարումներ աշխատակիցներին	(71,365)	(67,216)
Վճարումներ բյուջե և սոց հիմնադրամ	(26,031)	(45,021)
Այլ ելքեր	*(1,839)*	(195)
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	15,376	15,232
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ նյութական ակտիվների ձեռք բերում	(998)	-
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների ձեռք բերում	(9,311)	(3,197)
Տրամադրված կարճաժամկետ փոխառություն /ելք/	(1,000)	(50)
Տրամադրված կարճաժամկետ փոխառություն /մարում/	-	250
Բանկային ավանդից ստացված տոկոսներ	2,387	250
Բանկային ավանդի ներդրումից ելքեր	-	(30,000)
Բանկային ավանդի մարումից մուտքեր	30,000	-
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	21,078	(32,747)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	36,454	(17,515)
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	(85)	(70)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	28,886	46,471
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	65,255	28,886

10-ից 32-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռեկտոր
Արա Զոհրաբյան

Գլխավոր հաշվապահ
Միդա Աբրահամյան

Digitally signed by ABRAHAMYAN AIDA 5802580143
Date: 2023.06.16 10:13:16 AMT

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.06.2023 11:38